

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

<b>Պաշտոնի անվանումը.</b>	Ազգային փորձագետ
<b>Ծրագրի անվանումը.</b>	Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում
<b>Ծրագրի տևողությունը.</b>	Հոկտեմբեր 15 – դեկտեմբերի 15 2015
<b>Սկիզբը.</b>	Հոկտեմբերի 15, 2015
<b>Պայմանագրի տեսակը.</b>	Ծառայությունների մատուցման պայմանագիր
<b>Մեկնարկը</b>	15 Հոկտեմբեր, 2015
<b>Վայրը</b>	ՀՀ, ք. Երևան

### Ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին

«Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» ծրագիրն իրականացվում է Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի) ներկայացուցչության և ՀՀ արդարադատության նախարարության համագործակցության շրջանակում ՀՀ ԱՆ «Իրավախիստում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Այն ուղղված է օրենսդրության հետ առնչվող, այդ թվում՝ քրեական, քաղաքացիական կամ վարչական արդարադատության համակարգերի և մարմինների հետ որպես տուժող, հանցագործության վկա, իրավախախտ երեխաների իրավունքների պաշտպանության իրավական և գործնական ընթացակարգերի բարելավմանը, ինչպես նաև արդարադատության մատչելիության ապահովմանը:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու է օրենսդրության վերանայում երեխաների իրավունքների պաշտպանության համատեքստում, անչափահասների արդարադատության վերաբերյալ տեղեկատվության հավաքման առկա վիճակի գնահատում և միասնական, համապարփակ տեղեկատվական շտեմարանի ստեղծմանն ուղղված գործողությունների պլանի կազմում, կարողությունների զարգացում իրավախախտ, տուժող և հանցագործության վկա երեխաների հետ աշխատանքում քննչական ծառայողների համար:

Հաշվի առնելով տարբեր գերատեսչությունների դերակատարության և համագործակցության կարևորությունն անչափահասների արդարադատության համակարգի կայացման գործում՝ ծրագրի շրջանակներում նախատեսվում է համակարգող խորհրդի ստեղծում:

## **Աշխատանքի շրջանակը**

Ծրագրի աշխատակազմի և միջազգային փորձագետի հետ համատեղ ծրագրի շրջանակում ապահովել ծրագրի հետևյալ բաղադրիչի կատարումը. երեխաների հետ առնչվող քննչական ծառայողների կարողությունների և հմտությունների զարգացում:

## **Պարտականությունները**

Փորձագետի պարտականություններն են.

- Ուսումնասիրել տուժող և հանցագործության վկա երեխաների հարցերին առնչվող արդարադատության ՄԱԿ-ի ուղեցույցները՝ ուղղված անչափահասների արդարադատության ոլորտում աշխատող անձնակազմին,
- Բացահայտել իրավախախտ, տուժող և հանցագործության վկա երեխաների հետ աշխատանքում քննչական ծառայողների կարողությունների զարգացման կարիքները երեխաների իրավունքների պաշտպանության տեսանկյունից,
- Հիմք ընդունելով տուժող և հանցագործության վկա երեխաների հարցերին առնչվող արդարադատության ՄԱԿ-ի ուղեցույցները՝ միջազգային փորձագետի հետ համատեղ մշակել գործառնական ուղեցույց՝ ուղղված քննչական ծառայողների կարողությունների զարգացմանը,
- Իրականացնել դասընթաց՝ ուղղված գործառնական ուղեցույցից օգտվելու կարողությունների ձևավորմանը,
- Վարել գործնական դասընթաց՝ ուղղված ուղեցույցով աշխատելու հմտությունների բարձրացմանը,
- Տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն և աջակցություն միջազգային փորձագետին, ապահովել վերջինիս կողմից տրամադրված խորհրդատվության և տեղեկատվության կիրառումն իրականացվող աշխատանքներում,
- Մասնակցել ծրագրի աշխատակազմի հանդիպումներին, միջոցառումներին, աշխատանքային հանդիպումներին և քննարկումներին,
- Պատրաստել և ներկայացնել աշխատանքային պլան, ժամանակացույց, ընթացիկ հաշվետվություններ և այլ պահանջվող փաստաթղթեր:

## **Արդյունքը**

Իրավախախտ, հանցագործության վկա, տուժող երեխաների հետ աշխատանքում քննչական ծառայողների կարողությունների զարգացում:

## **Պահանջվող որակավորում, փորձ և կարողություններ**

### **Կրթություն**

Բարձրագույն իրավաբանական կրթություն

### **Աշխատանքային փորձ**

Նվազագույնը 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, մասնավորապես երեխաների իրավունքների պաշտպանության և անչափահասների արդարդատության ոլորտում, դասընթացներ վարելու փորձ:

### **Կարողություններ**

- Իրավական վերլուծություններ իրականացնելու հմտություն
- Թիմային աշխատանքի կարողություն
- Դասընթաց վարելու հմտություններ
- Գերազանց վերլուծական հմտություններ
- Հաշվետվություններ գրելու և ներկայացնելու հմտություններ
- Հայերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացություն
- Համակարգչային գիտելիքներ (MS Word, Excel, PowerPoint, web applications)